



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

αυδ

Καμπα

Εγγραφή 1907

Εγγραφή 1907

9147925

U-75

5862

24 JAN 2006

№1 Հրատարակութիւն Հնչակեան Կուս. Սփորեակի Գ. Յանձնախումբի

ԱՍՍ

# Հ Ա Ի Ս Է

(ՊԱՅԿԵՐ ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ)

Արտատպուած Երիտասարդ Հայաստան,ԸՆ

ԳԻՆԸ 10 ՍԷՆՏ

ՅԳՈՐԸՆ  
«ԵՐԻՏԱՍԱՐԳ ՀՈՅՈՍԱՆԻ»

ԿԻԻ—ԵՕԳԳ

1907

9(47.925)  
Ա-75

19 AUG 2011

(47.925)

Ա-75

24 JAN 2006

No.1 Հրատարակութիւն Հնչակեան Կուս. Ամբիկայի Գ. Յանձնախմբի

ԱՍՕ

Հ Ա Ի Ս Է

(ՊԱՏԿԵՐ ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ)

Արտատպուած «Երիտասարդ Հայաստան»-էն

ԳԻՆԸ 10 ՍԷՆՏ

ՏԳՈՐԸՆ

«ՆՐԻՑԱՍԱՐԿ ՀՈՅՈՍՅԱՆԻ»

ՆԻԻ—ԵՕՐ-Բ

1907

15 FEB 2013

Ի նկատի ունենալով այն, որ առհասարակ մեր մէջ բա-  
ւական զգալի է ժողովրդական ընթերցանութեան հա-  
մար այլ և այլ գրքերու բացակայութիւնը, Հնչակեան  
կուսակցութեան Ամերիկայի Գործադիր Յանձնախումբը  
որոշած է հրատարակել մի շարք վիպական, բանաստեղ-  
ծական, պատմական-յեղափոխական և հասարակական գի-  
տութեան նւիրած գրքոյկներ, որոնք իրենց մատչելի  
գներով կարողանային տարածել ժողովրդի լայն խաւե-  
րուն մէջ:

Եւ ահա՛, ներկայիւս իւրոս կընծայենք առաջին գրք-  
քոյկը ընկեր Ասոյի «ՀԱՒՍԷՆ»:

Հնջուկեան ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ Գ. ՅԱՆԶՆԱԽՈՒՄԲ

1 Փետրուար 1907  
Նիւ-Եօրք



9

647-92

# Հ Ո Ւ Ս Է

Մէկ ասորի ամբողջ Սասունցիք կուրի մէջ էին: Մէկ օր Տալարիկն էր կուողը, միւս օրը Կէլիէկուզան, երրորդ օրը Շէնիք և այսպէս շարունակաբար. սովորական, առօրեայ աշխատանքների պէս, կտիւ, արշաւանքներն էլ մշտական զբաղմունք էին դարձել: 1893 թւականից մինչև 1894-ը այս պատերազմ-ճակատամարտները, Սասունը գրել էին լարւած, անհանգիստ և տենդային գրութեան մէջ: Օսմանցին տեսնելով օր մասնակի արշաւանքները, հրոսակային յարձակումները անզօր են ըմբոստ Սասունը խոնարհեցնելու, վճռել էր իր զինւորական բոլոր ոյժը այդտեղ թափել ու ճնշել խրոխտ լեռների քաջագուն զաւակներին: Այս բանի համար մի գունա գօրքերի հետ վարպետներ ուղարկեց Սասուն, որ նորոգեն և ամրացնեն Ատանի կամուրջը:

Դրութեան օրհասական լինելը այս անգամ լաւ ըմբռնեցին Սասունցիք: Գիտակցելով գալիքի ահաւորութիւնը, նրանք վճռեցին համայնական խորհուրդ կազմել, խնդիրը, անելիքը ամենալուրջ եւ բազմակողմանի կերպով քննելուց յետոյ, կայացնել վերջնական վճիռ և այդ վճիռը իրագործելու համար մինչև վերջին շուռչ ու վերջին Սասունցին կտիւ մղել:

Ժողովներ տեղի ունեցան Տալարիկ և Կէլիէկուզան գիւղերում, մասնակցութեամբ բոլոր գիւղերից եկած պատգամաւորների, քահանաների, նշանաւոր ռազմիկ կանանց և աղամարդերի. այս ժողովների հոգին, ղեկավարը ՄՈՒՐԱՏՆ էր, Սասունցիներից սիրւած ու յարգւած յեղափոխական անձնէր գործիչը:

Ընդհանուր խորհրդակցութիւններ վերջանալուց մի քանի օր յետոյ Սատանի կամուրջը քարուքանդ էր արւած, և շինութեան հսկող ու մասնակցող թիւրքերից շատերը

սպանւած : Ժողովուրդի վճիռը կատարեալ յաջողութեամբ  
գործադրել էին Սասունի քաջերը :

Մարտակոչը տրւած էր :

Օգոստոսի մէկին Սասունը պաշարել էին օսմանցոց,  
կանոնաւոր զօրքերի բազմաթիւ վաշտեր իրենց թնդանօթ-  
ներով, այնտեղ էին Ձէքի, Սալէհ և Մուսթաֆա փաշա-  
ներ, Ձիւանցոց շէյխ Մահմաւոր, որը անցել էր Ուլըքցի,  
Խարզանցի, Գատրգանցի, Խիանցի, Բագրանցի, Բէլըքցի,  
Ձիւանցի, Ջալալցի, Հայտէրանցի եւ ուրիշ շատ քիւրս  
հրոսակ ցեղերի տասնեակ հազարնոց բաշխօզուկ հեծ-  
եալների գլխին :

Երկու կողմից էլ սոսկալի պատրաստութիւններ էին  
տեսնում. Թշնամին աշխատում էր պաշարողական շղթան  
ըստ կարեւորն սեղմել, իսկ Սասունցիք ամրանում էին  
Անտոքի, Տրփրքարի եւ Կէփէի անառիկ բարձունքների  
մէջ : Ծակասամարտը անխուսափելի էր :

\*\*\*

Գիշեր էր :

Լուսինը հորիզոնի Արեւելեան ծայրից հեզիկ, նա-  
զիկ բարձրանալ սկսեց : Անտոք իր բոլոր զգեստները մեր-  
կացած հսկայի նման, գլուխն ու թիկունքը, կուրծքն ու  
գէմքը լուսնակի լոյսի առաջ, անհոգ ու համարձակ փայլ-  
փրում էր. ապառաժ քարերը, հսկայակերտ ժայռերը  
ընկած բարձրագագաթ Անտոքի վրայ, ասես ճնշել են  
ուզում ահաւոր լեռը, իրենց անհանդուրժելի ծանրու-  
թեան տակ : Կաթնածոր երկինքը, արծաթազօծ լուսինը,  
ոսկեծին աստղունքը սքանչելի ներդաշնակութեամբ, ե-  
թերալին պարզ ու անհուն բարձրութիւնից ակնապիշ ու  
անթարթ նայում են մեծամարմին Անտոքին, ասես անձե-  
ռագործ ու անծայր, անսիւն ու անյենարան, վրան լինի Ան-  
տոքի վրայ փուած : Անտոքը կրծքին ծանր քարեր, շալ-

կած անձանելի ու բուն վշտեր, գլխին ու կողքերին թի-  
կունքի ու ոտների վրայ, լայն ու անդնդախոր փորեր,  
ծմակներ ու հովիտներ, ասես դարերից իվեր ընկած, ան-  
բուժելի վէրքերով ու խոցերով տանջւող մի հսկայ լինի,  
որ տխուր ու մուռն, լռիկ ու տրտում փուել լուսնի ա-  
ռաջ եւ նրանից, որպէս հարագատ քրոջից օգնութիւն է  
հայցում ողորմագին :

Անտոքի ոտերն ընկած, նրա բարձր ու անխորտակելի  
կարողութեան, իր բաղդը յանձնած Ալիանցիք գիւղը,  
նստած բազմաթիւ բլրակների գլխին, գեղեցիկ ծառաս-  
տանների մէջ, պաղորակ եւ քջջան աղբիւրակների մօտ,  
վազկան ու ցայտուն առաւակների հետ, մէկ աստղազարթ  
երկնքին էր նայում, մէկ Անտոքին ուղղում իբր աղեր-  
սալի աչերը, ապա դէպի հարաւ դառնում, Մովսասարի  
զարդարան կրծքի պըրանքով, լուսնկայ գիշերւայ մեղմ  
լուսաւորութեան տակ կանանչ ու ծաղիկ տարածող սարի  
գեղանկար տեսքից հիանում :

Չքնաղ էր Ալիանցիքը, բաղդաւոր էին նրա բնակիչ  
հայերը :

Շքեղաչէն ծառաստանների մէջ, մէկը միւսից հեռու  
չինած էին իրենց բնակարանները Ալիանցիքի բոլոր գիւղա-  
ցիները :

Հեռու ծառաստաններում, մի մեծ բլուրի հարթ մա-  
կերեւոյթի վրայ շինւած էր Մուռ Աւօեց տունը :

Ալիանցիքի բոլոր հայերը ոտքի վրայ էին. գիւղը ար-  
աստովոր եւ աննդային շարժման մէջ էր. մետաղների  
հնչիւնները տարածւում էին խաղաղ գիշերւայ մաքուր  
օդի մէջ և զիլ արձագանք գտնում հանդիպակաց լեռնա-  
խորշերում :

Պատերազմի պատրաստութիւն էին տեսնում :

Մուռ Աւօհնց բակում մէկ կին ու չորս տղամարդիկ էին կանգնել : Կինը Աւօհնց մեծ հարսն էր, Հաւսէ անունով : Հաւսէն Սասունցի հերոսուհիներից երկրորդն էր, առաջինը՝ Շաքէն էր :

Կէլիէկուզանի Ղըրօհնց աղջիկն էր Հաւսէն : Նա դեռ մանուկ հասակից աչքի էր ընկնում իր քաջութեամբ եւ ամէն վտանգ, ոյժ արհամարհող անվեհերութեամբ : Ամէն առաւօտ նա կը հագնէր իր պարզ ու անպանդճ շորերը, հագնում էր կարմիր շիլայից կարած, մինչ ոտներ իջնող քղանցքաւոր զպուն, գպունի վրայից, գօտին կապում մի քանի տակ ոլորելով, ապա կապում էր ասեղնազօրծ սրտնոցը, նրա վրայից գունաւոր կտորից կարած, ոսկեթել երկղներով նախած, թւերը բազ սալթա, գլուխը ծածկում արծաթ թասակով, որի եզրերը զարդարած էին պէս-պէս դրամներով, ոտներին հագնում երկարավիղ ու բարձրակրունկ կարմիր ջլմա, ծամթելերը կապում բազմաթիւ հիւսած քներով ուսերին փուած խուրճ վարսերից, նրանց վերջին ծայրերը զարդարում խոպոպիք-կոնճուկներով, սարի ջէլրանը մէկ փայտ ձեռին դուրս կը գար անից հօտաղների հետ ու գիշեր ցերեկ, սարերն ու քարեր, ձորերն ու դաշտերը, ծմակներն ու քօլերը ոտի տակ էր տալիս, խաղալով ու խայտալով, երգելով ու թռչկոտելով : Ամէն անգամ երբ նստելուց բէգրող իր հարազատները կուրի, թալանի ու արշաւանքի կերթալին, Հաւսէն անբաժան նրանցից, հարազատներից մէկի մօտ կանգնած օգնում էր :

Այսպէս էր անցել Ղըրօհնց աղջիկ Հաւսէի մանկութեան օրերը :

Այժմ նա վաթսուն տարեկան կին էր, չորս կտրիճ գաւակների մայր, խելացի, փորձառու եւ անվեհեր, իր ներկայութեամբ ամէնքին պատկառանք եւ խրախոս ներշնչող :

Սովորական շորերը հագին, թւերը հոլանի, ձիւնա-

փայլ ու մինչ կրունկները երկարող լաջան անհագօրէն փրօած գլխին ու ուսերին, լուսինի մեղմ լուսաւորութիւնից օգտուելով բազ բակի մէջ իր չորս սրդիների հետ զբաղւած էր զէնքերի պատրաստութեամբ, շէշխանները սըրբում, մաքրում էին, գնդակ ու վառօդ լցնում ամանների մէջ, սրերի բերանները սրում, արծաթազօծ լուսաւորութեան մէջ սրերը փայլում ու շողողում էին նրման ոյթրուն լեզուների :

Յուզւած էր Հաւսէն, լեռնուհին աւելի քան երբ ե իցէ մտազբազ էր երևում, նրա որդիքը բարձրահասակ ու յաղթանդամ, հնազանդ ռազմագէտ մօր հրամաններին լուռ ու մուշկ գործում էին :

— Լաօնե՛ր, ասաց Հաւսէն իր օրդիներին, տայէն զձեզ դուրպան, մեր հարազատները վճռեցին պատերազմել, մենք երդեցինք կուել, որովհետեւ է՛լ անտանելի են դարձել թշնամու արածները, որովհետեւ ամօթ է մեզ, մեր սուրբ լեռները փուլ կը գան եւ մեզ տակովը կանեն երբ մենք «Մընք քար կը հայցունք, ջուր դարձունք զէրկաթ, ափսո՛ս չը՞նք մենք վատ տաճկին ռոխաթ» երգենք եւ ապա այսքան զրկանքները համերաշխութեամբ տանինք, այս կուրը խաղ չէ, քիւրտ ու տաճիկ, զօրք ու թնդաւնօթ բերսներով են թափել, մեզ հետ է միայն, հեռաւոր երկրից եկած, սիրտը մեզ համար էրւած, կենքը Սասունին մատաղ արած ՄՈՒՐՍՏԷ : Ձեզ եմ ասում, գաւակներ, վա՛յ ձեզ եթէ քամակից վէրք ու գնդակ ընդունելով ընկնէք, այն ժամանակ ամէնից առաջ ես աչերս կը փակեմ ձեր դիակները չտեսնելու համար, ես իսպառ կը մոռանամ ձեր յիշատակը, կափոտսամ ձեզ աւածս կաթը եւ անքուն անցկացրածս դիւերները :

Չաւակները խորին երկիւղածութեամբ լսում էին մօր խօսքերը :

— Դուք երկուսդ— Աւէ եւ Հաջօ, կը լինիք ինձ հետ ի՛մ



խմբի մէջ. իսկ դուք կը գնաք Ռէյս Գրքօյի Հետ. այդպէս է վճռուած: Մըր սուրբ Մարտիէն, Անտօք, Ծովասար, կանչին—«Հարի՞ եփ մեռուկ մնաք դուք», մեզ են կանչում, մեզ են ասում մեռուկ, զաւակնե՛րս, գէ՛ Ս. Մարտիէն ձեզ ոգնական էղնի, ցոյց տանք որ մենք մեռուկ չենք, դուք էլ ցոյց տէ՛ք որ Հաւսէի Հարազատներն էք: Բազուկ աստղախումբը երկնից ամենաբարձր կէտին էր հասել և այնտեղ պայծառ պէծին-պէծին պսպղում էր երբ Հաւսէն ամէնից մեծ ու փոքր որդիներ, Աւէն ու Հաջօն Հետն առած, նիզակը ձեռին, սուրը կողքին դուրս եկաւ Ալիանցիքի ծառաստաններից ու անյայտագաւ լեռան ստորոտի թաւուաններում:

Առաւօտեան վաղը սկսեց Չայի ահեղ ճակատամարտը, հրացանների բո՛ւմ-բո՛ւմ որոտումները, գնդակների սուր վզզոցը, սրերի շողիւնը, շէշխանների չախմախների չխչխկոցը, ձիերի խրխինջը, կուռոցների կատաղի գոռում գոչիւնները, շտեմնուած թափով աղմկում էին Սասնոյ լեռներում ծրարած չայը ու իր շրջակայքը: Վառողահոտը բուրում էր ամէնուրեք, ծուխը մշուշանման բռնել էր արևի դէմը ու սքօղել նրա պայծառ երեսը: Լօ՛, լօ՛, լօ՛ գոռ հնչիւններով միմեանց յայտնում էին պատերազմողները:

Հայերի ամենավտանգաւոր դիրքերից մէկում, մէկ ժայռի ետև կանգնած էր մի բարձրահասակ կին, դէմքը արև վառ, աչերը զայրացկոտ, կեռ սուրը կողքին և սըրածայր նիզակ ձեռքին: Ամէն անգամ երբ իր շրջապատում դարան մտած քաջերից մէկի գնդակը նպատակին հասնելով մէկ թշնամու էր գլորում, նա անհուն բերկրութեամբ կանչում էր.— Լաօ՛, լաօ՛, մամօն քեզ դուբբան, ձեռներդ զօրանան:

Հաւսէն էր նա. իր երկու որդիների Հետ պաշտպանում էր մի շատ կարեւոր անցք, թշնամու ճակատին նայող

և նրանից անմիջական վտանգ ստացող դիրքը տեւել էր Հաջօն, իսկ ինքը սպասում էր ձեռնամարտին, որը ըստ երևոյթին շուտով պիտի սկսւէր:

Յանկարծ հրացանների որոտումները աւելի ուժեղացաւ, և՛ ձիաւորների մի մեծ խումբ սրարչաւ քշեց դէպի Հաջօնի դիրքը. Հաջօն տեսնելով որ իր դիրքից շատ դժւար է պաշտպանել փոքրոջ տալով յետ նահանջեց, աւելի լաւ դիրքից կուելու համար, Հաւսէն նկատեց այս և թշնամու մերձենալը, զայրացած կանչեց.— Հաջօ՛, Հաջօ՛, կուկօն (1) քաշեմ դքո գլուխ, հարի՞ ես կանգնել լաօ՛, էրի՛ շաշուր է (սրի կուի), սուրը քաշեց Հաւսէն առայ սլացաւ, նրան հետեցիցի դարանած մարտիկները երգելով.— Մըր (2) մըր առջեւէն փախնի քընց կատու, ափսո՛ս չընք մնանք տաճկին հարկատու: Հազարաւորները իրար էին խառնըւած, հրացանների որոտը էլ հատ հատ էր լսւում, սրերն էին շառաչում, իջնում ու ելնում, հարւածում ու հարւած ընդունում, իւրաքանչիւր բարձրագոյ փայլուն սուրը արիւնով կարմրում էր, ծայրից արի՛ւն էր կաթում: Կենդանիները անցնում կոխտում էին դէակների վրայից: Կիսմեռներ ու վիրաւորները մռնչում, հառաչում ու տքում էին: Արի՛ւն էր հոսում. արիւնի մէջ էին շաղախելոյ, արիւնոտ էր բոլորի ոտները:

Հաւսէն քօֆին ու լաչակը փռած ուսերին, թեքերը հոլանի կուում էր սուրը խաղացնելով, ձիաւոր քրդերի մի փոքրիկ խումբ շրջապատեց նրան. առիւծը սրի մի հարւածով վայր բերեց նրանցից մէկին, ըոպէսպէս թռաւ ձիան վրայ, ասպանդակեց ուժեղ նժոյգին, մի քանի պտոյտներ գործեց, սուրը շողողացնելով սլացաւ:

Թշնամին փախել էր: Հարիւրաւոր դիւակներով ծածկւել էր դաշտը:

Մէկ կին միայն, վերջին անգամ, նիզակի ծայրից մէկ շոր, ասպնակար եւ ծուպբաւոր, դըրօշականման կախ տը-

(1) Սեւ վրան: (2) Առիւծ:

ւած, նժոյգ նստած թռչում էր դաշտի միջով և գնում դէպի Անտոքը: Դրօշակակիրը Հաւսէն էր:

\* \* \*

Անտոքը պաշարւած էր. թշնամին իր տասնեակ հազարնոց բանակով սեղմել էր Սասունցոց, որոնք տասնեակ օրերով դիմադրել էին քանակով ահեղ թշնամուն:

Մինչ օգոստոսի 16-ը թշնամու բոլոր յարձակումները յետ էին մղւած. կանոնաւոր զօրքերի և բաշխօղուկ կատաղիների կրած պարտութիւնները իսպառ խայտառակ էին: Նրանք մինչեւ այդ օր ո՛չ մէկ կարեւոր դիրք և ամբուլութիւն գրաւել չէին կարողացել, իրենց զոհերի թիւը մէկ քանի հազարի էր հասել: Կուր մէջ էլ խարդախ եւ ասպետական ոգուց զուրկ օսմանցին, վրէժը լուծում էր անմարդաբնակ եւ անպաշտպան գիւղերն այրելով ու քարուքանդ անելով:

Բանակի մէջ, վերջին օրեր, տիրապետել էր ամենածայրայեղ յուսահատութիւն, ո՛չ մի գունդ յօժարակամ կուր չէր գնում, քիւրտերը վհատած հալհոյում իին կեղտոտ ոսմին, որ իրենց խաբել եւ բերել կոտորել էր տալիս Սասունի լեռներում. շատերը արդէն փախչում էին: Զօրքերը ըմբոստանում էին. թւում էր որ նրանք իրենց զէնքերը իրենց հրամանատարների դէմ պիտի դարձնեն: Դժուար կացութեան մէջ էին փաշաներն ու զօրապետները, շէյխերն ու ցեղապետները. նրանք համոզւել էին որ կըոււով Սասունը յաղթել չեն կարող. ուստի դիմեցին ամենազազրելի խաբեբայութեան:

Մինչ օսմանցու նենգամտութիւնը յաջողել էր իր պատւիրակների սուտ խոստումներով, հաշտութեան նենգ խօսքերով, Անտոքից իրենց բանակ բերել Սասունի նշանաւորներից եւ ռազմիկներից շատերին և՛ սկսել հրեղէն

կարկուտ թափել նրանց վրայ ու սրախողխող անել նրանց. Անտոքի տակ, բանակից քիչ հեռու, կապրէ շարաֆխանում սկսեց մի գոռ ճակատամարտ:

Նորից Սասունը թնդաց, Անտոքի բարձունքներից հըրացանները որոտացին, հազարաւոր բերաններ մահ կանչեցին, թշնամու անհնարին նենգաւորութիւնից պայրացած լերան զաւակները:

—Մատաղ էղնի ձեզ Հաւսէն գարկէ՛ք սարի լաճեր, գոռում էր հերարձակ Հաւսէն: Մարդիկ երկու կողմից, աշնան տերևների պէս վայր էին թափւում:

—Հաջօ, ջան բալա, մամօն քեզ մեռնի զա՛րկ անհաւատներին:

—Մաիօ, թւանքս աւրաւ, էմլա՞ կեղնի, կանչեց սրտմտած Հաջօն:

—Եա սուրբ Մարափա, գոռաց Հաւսէն, սուրը քաշեց ու վազեց, Հաջօն մօր օրինակին հետեւեց: Դարձեալ ձեռնամարտ սկսեց:

\* \* \*

Սրոխտ Սասունը պարտւած էր:

Շէն Սասունի բոլոր դիւղերը այրւում էին, քարուքանդ փլատակներից ծուխը պալան-պալան բարձրանում էր, ամէն կողմից կծու խանձահոտ էր փչում, չորացած արիւնի հոտը. հոտած և անթաղ դիակներից տարածւող գարշահոտութիւնը բուրում էր Սասունի կուսական լեռներից եւ անարատ ձորերից: Իւրաքանչիւր քարի տակ ամէն մի ջուրի մօտ: ծմակներում, փոսերում, աղբիւրների ակունքին, առուների եզրին ընկած էին յօշ-յօշ եղած դիակներ: Մարդկանց տեղ գէլ ու գազաններ էին թափառում ու ոռնում անդադար. լէշակեր թռչուններ էին սուր ձիչեր արձակում:

Ձէնք ու ռազմամթերք սպառած, տուն ու շէն կոր-  
 ցըրած, բազմաթիւ կտորիճներ ու հարազատները զոհած  
 տարաբախտ Սասունցիք, անօթի ու ծարաւ, տկրզ ու  
 տաբորիկ, արմատ կրծելով, խոտ ծամելով, ուրւական-  
 ների պէս թափառում էին քարայրէ ծմակ, ծմակից ձորակ ու  
 իրենց լեռների հետ իրենց դժգոհութիւնը ողբում, թըշ-  
 նամու տմարդի խաբէբայուցութիւնն ու բարբարոսութիւ-  
 նը անիծում:

Վիրաւորներ եւ անհետ կորածները բազմաթիւ էին:  
 Հաւսէն էլ չկար: Նրան վերջին անգամ տեսել էին Կապրէ  
 Շարաֆեանի և Կէլիէկուզանի կռիւներում: Հաւսէն գե-  
 րի գնացող չէր, նա՛ այդ անելթոյլ չէր տար քանի ողջ էր,  
 բայց ի՞նչ էր պատահել նրան, ոչ ոք գիտէր, պտրում էին  
 նրան արտասուելով, գոնէ դիակը այն դիւցազնուհուն  
 ասում էին Սասունցիք:


\* \* \*

Սեպ, սե ու սեպ մի ապառաժի տակից մէկ մաքուր ու  
 կաթնահամ աղբիւր էր բղխում սրտուռ ու զղզղուն, աղ-  
 բիւրի եզերքը բուսել էին փշոտ ու ցածլիկ մացառներ:  
 Աղբիւրը կ'կլում ու գլորում էր մեղմիւ. ժայռը ասես ան-  
 հուն վշտերից տխրած արտասուում էր դառնագին. իսկ աղ-  
 բիւրը ողբ մրմնջում, ժայռի տակին, մագառների մէջ, ինչ  
 որ կարմիր բան էր թպրտում. նա մերթ շարժւում էր ապա  
 անշարժ ու անձայն ընկնում, մերթ կողկողում էր երբեմն  
 մռնչում ու հռոտջում կտրտուող ձայնով: Պուտ մը ջո՛ւր...  
 ջո՛ւր... այրւեց սիրտս... խորովւեց լեարդս... բերանս  
 չորցա՛ւ... ա՛խ... գոնէ մէկ քա՛ր... Վիրաւոր մի կին էր,  
 մագերն արձակ, արիւնաներկ ու արիւնշաղախ միմեանց  
 կպած, մարմինը պատառոտած ու ճեղքւած, բերանքսիվար

ընկած, մատների կոճերը տրորւած ձեռներով չանկուում  
 էր գետինը, մացառներից բռնում, և հազիւ առաջ էր  
 շարժւում:

— Ջո՛ւր... ջո՛ւր... մրկեցի: Վիրաւորը մի քանի  
 ուժգին շարժումներ գործելով վերջապէս հասաւ ժայռի  
 տակ. օ՛խ... գոչեց նա, բերանը աղբիւրի ակին դրեց ու սկսեց  
 ազահաբար խմել ջրիցը: Երբ յագեցաւ նա, յանկարծակի մի  
 շարժում գործելով նստեց ու թիկն տւեց ժայռին, արիւնա-  
 գոյն աչքերը դէս ու դէն ածեց, ա՛խ... Հաջօ՛... Աւէ՛...  
 Սասո՛ւն բացակաւ չելով գլուխը մի քանի անգամ ուժգին  
 կերպով քարաժայռին խփեց ու ընկաւ աղբիւրի գլխին ար-  
 դէն անշնչաղած: Մեռնողը Հաւսէն էր: Ժայռը դարձեալ  
 արտասուում էր, աղբիւրը էլի ողբ ասում:

(ՎԵՐՋ)



«Ազգային գրադարան»



NL0397621

